



ՍՈՒՐԲ ՉԱԿՈԲ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

ԽԱԶՎԵՐԱՅԻՆ ԵՏՔ ՀԻԱԳԵՐՈՐԴ ԿՐԻԱԿԻ

22 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2017

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Հաւատով Խոստովանիմ	Էջ 3
Ծանուցումներ	Էջ 4

ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԴԱՐԵՒ ԳՐՔԵՆ (20.1-21.6)

Ասորեստանի Սարգոն թագաւորին հրամանով Տարաթան հրամանատարի Ազոտոս գալէն եւ պատերազմով զայն գրաւելէն երեք տարիներ առաջ, Տէրը հետեւեալ պատուէրը տուաւ Ամոսի որդի Եսայիին. «Գնա՛ հագուստդ վրայէդ հանէ եւ հողաթափդ ալ՝ ոտքերէդ»։ Եսայի մարգարէ ըսուածը կատարեց եւ սկսաւ մերկ ու բոպիկ պտըտիլ։ Տէրը այսպէս ըսաւ. «Ահա երեք տարի է որ իմ ծառաս՝ Եսայի մերկ ու բոպիկ կը պտըտի։ Ատիկա նշան եւ օրինակ պիտի ըլլայ եգիպտացիներուն եւ եթովպացիներուն համար։ Թող հասկնան թէ ճիշդ այդպէս Ասորեստանի թագաւորը գերի պիտի տանի եգիպտացիներն ու եթովպացիները, ծեր թէ երիտասարդ, բոլորն ալ մերկ ու բոպիկ, իրենց ամօթոյքն ալ բաց, որպէսզի խայտառակուի եգիպտոսը։ Պարտութեան մատնուած եգիպտացիները ամօթ պիտի զգան եթովպացիներուն համար, որոնց վրայ դրած էին իրենց յոյսը. որովհետեւ եթովպացիներն էին եգիպտոսի վրայ իշխողը։ Այն օրը փղտացիները պիտի ըսեն. “Մենք ասոնց օգնութեան ապաւինած էինք, մինչդեռ ասոնք

նոյնիսկ իրենք զիրենք չկրցան ազատել Ասորեստանի թագաւորէն. մե՞նք ինչպէս պիտի ազատինք”։

Բարելոնի վերաբերող պատգամը.-

Անապատէն անցնող մրրիկի պէս փոթորիկ մը կու գայ ահա անապատ երկրէն։ Ահաւոր է տեսիլքը, եւ ինձի յայտնուածը՝ սարսափելի։ Ահա աւերողը կ'աւերէ, անիրաւողը կ'անիրաւէ։ Տեսիլքիս մէջ ելամացիները վրաս յարձակեցան, պարսիկ պատգամաւորները իմ վրաս եկան։ Փոխանակ գիշերը հանգիստով անցընելու, հեծեցի. սիրտս դողով լեցուեցաւ, երկունքը զիս բռնեց ծննդական կնոջ մը պէս։ Կծկուեցայ որ չլսեմ, ջանացի չտեսնել. միտքս մոլորեցաւ, շփոթութեան մէջ ընկղմեցայ եւ վախը զիս պատեց։ Տեսայ խնճոյքի սեղան մը դրուած. կ'ուտէին ու կը խմէին, մինչ անդին դէտեր պահակ կեցած էին։ Եւ ահա լսուեցաւ. “Ելէք, իշխաններ, ձեր վահանները առէք”։ Եւ Տէրը ինձի ըսաւ. «Գնա դո՛ւն ալ անձամբ դէտ կեցիր, եւ ինչ որ տեսնես՝ պատմէ»։

ՊՈՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ
ՆԱՄԱԿԵՆ
(4.3-18)

Որքան ատեն որ հոգեւորապէս անչափահաս էինք՝ բնութեան ոյժերուն կ'ենթարկուէինք ու կը ծառայէինք։ Բայց հիմա յարմար ժամանակը հասած համարելով, Աստուած աշխարհ զրկեց իր Որդին որ մարդկային մօրմէ մը ծնաւ եւ Մովսիսական Օրէնքին տակ ապրեցաւ, որպէսզի մեզ օրէնքին գերութենէն փրկէ եւ Աստուծոյ

որդիներ դարձնէ: Արդ, որովհետեւ իր որդիներն ենք՝ Աստուած մեր սիրտերուն մէջ զրկեց իր Որդիին Հոգին, որով զԱստուած «Հայր» կը կոչենք: Ուստի այլեւս ծառայ չէք, այլ որդի. եւ քանի որդի էք՝ Աստուածոյ խոստումը պիտի ժառանգէք:

Ճիշդ է որ նախապէս երբ զԱստուած չէիք ճանչնար՝ չաստուածներու կը ծառայէիք: Բայց հիմա որ զԱստուած ճանչցաք եւ մանաւանդ Աստուած ալ ձեզ ճանչցաւ, ինչպէ՞ս կրկին կը վերադառնաք բնութեան տկար ու խեղճ ոյժերու պաշտամունքին եւ վերստին կ'ուզէք անոնց ծառայել. յատուկ կարեւորութիւն կու տաք որոշ օրերու եւ ամիսներու, որոշ ժամանակներու կամ տարիներու: Կը վախնամ որ ձեզի համար տարած ամբողջ աշխատանքս զուր անցած ըլլայ:

Կը խնդրեմ, եղբայրներ, ինծի պէս եղէք, որովհետեւ ես ալ ժամանակ մը ձեզի պէս էի:

Ձեզի դէմ բնաւ գանգատ մը չունիմ: Ընդհակառակը, հարկաւ կը յիշէք թէ սկիզբը երբ աւետարանը ձեզի քարոզելու եկայ, տկար էի մարմնով. եւ հակառակ անոր որ հիւանդ վիճակովս փորձանք եղայ ձեզի, չանարդեցիք զիս, ոչ ալ արհամարհեցիք. այլ զիս ընդունեցիք այնպէս՝ ինչպէս Աստուածոյ հրեշտակը կամ Յիսուս Քրիստոսը պիտի ընդունէիք. եւ ուրախութեամբ ըրիք ատիկա: Հիմա ի՞նչ պատահեցաւ: Կրնամ վկայել ձեզի համար, որ եթէ կարելի ըլլար՝ ձեր աչքերը կը հանէիք եւ կու տայիք ինծի: Միթէ ճշմարիտը խօսած ըլլալուս համար թշնամի՞ եղայ ձեզի: Մի՛ կարծէք թէ ձեզի հանդէպ մասնաւոր հետաքրքրութիւն ցուցաբերող մարդիկը ձեր բարիքը կը խորհին: Ո՞չ: Անոնք կ'ուզեն ձեզ ինձմէ բաժնել, որպէսզի ամբողջութեամբ իրենց հետեւիք: Բայց երանի տեւաբար բարիին նախանձախնդիր ըլլայիք, եւ ոչ միայն երբոր ես ձեր մէջ ներկայ եմ:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ ԸՍ ՂՈՒԿԱՍԻ (4.14-24)

Յիսուս Գալիլիա վերադարձաւ Սուրբ Հոգիին զօրութեամբ, եւ ամբողջ գաւառին մէջ իր համբաւը տարածուեցաւ: Անոնց ժողովարաններուն մէջ կ'ուսուցանէր՝ արժանանալով բոլորին հիացումին եւ գովասանքին:

Եկաւ նազարէթ քաղաքը, ուր մեծցած էր, եւ իր սովորութեան համաձայն Շաբաթ օրը ժողովարան գնաց: Երբ ոտքի ելաւ կարդալու օրուան ընթերցուածը, իրեն տուին եսայի Մարգարէին գիրքը: Բացաւ եւ գտաւ այն տեղը ուր կ'ըսէր.

“Տիրոջ Հոգին վրաս է. որովհետեւ օծեց զիս եւ դրկեց՝ աղքատներուն փրկութեան աւետիս տալու, սրտաբեկները միխթարելու, աւետելու՝ թէ գերիները պիտի ազատագրուին, կոյրերուն աչքերը պիտի բացուին, հարստահարուածները պիտի ազատին. եւ յայտարարելու թէ ահա հասած է ժամանակը երբ Տէրը պիտի փրկէ իր ժողովուրդը”:

Ապա գիրքը գոցեց, տուաւ պաշտօնեային եւ նստաւ: Ժողովարանին մէջ գտնուողներուն բոլորին աչքերը իրեն սեւեռած էին, երբ ըսաւ. «Այս մարգարէութիւնը որ դուք լսեցիք, ահա այսօր իրականացաւ»: Ամէնքն ալ տպաւորուած էին իրմէ, եւ հիանալով անոր չնորհալի խօսքերուն վրայ, կ'ըսէին. «Այս մարդը թովսէփի որդին չէ՞»: Յիսուս ըսաւ. «Անտարակոյս ինծի պիտի ըսէք հետեւեալ առածը. “Բժի՛շկ, դուն քեզ բժշկէ”»: Եւ պիտի ըսէք. “Ինչ որ լսեցինք թէ գործեր ես Կափառնաումի մէջ, այստեղ՝ քու քաղաքիդ մէջ ալ կատարէ”»: Եւ աւելցուց. «Բայց դուք ալ գիտէք, որ մարգարէն իր ծննդավայրին մէջ յարգ չունի»:





ՀԱՅՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ

Այսօր, ի ժամու ժարողի, Դպրաց Դասը պիտի երգէ հայրենի երգահան Արեգ Լուսինեանի «Հաւատով խոստովանիմ»:

Ստորեւ Ներսէս Շնորհալի Հայրապետի զօրաւոր աղօթաշարին առաջին հինգ տուները, որոնք վերհայեցողական երաժշտութիւն են զգեցած – իմք.:

Հաւատով խոստովանիմ եւ երկիրպագանեմ քեզ, Հայր եւ Որդի եւ Ս. Հոգի: Վնեղ եւ անմաշ բնութիւն, արարիչ Հրեշտակաց եւ մարդկան եւ ամենայն եղելոց: Եւ ողորմեա քո արարածոց, եւ ինձ բազմամեղիս:


Հաւատով խոստովանիմ եւ երկիրպագանեմ քեզ, անբաժանելի լոյս, միամսական Ս. Երրորդութիւն եւ մի աստուածութիւն: Արարիչ լուսոյ եւ Հալածիչ խաւարի, Հալածեա ի Հոգոյ իմմէ զիսաւար մեղաց եւ անգիստութեան, եւ լուսաւորեա զմիսս իմ ի ժամուս յայսմիկ աղօթել քեզ


ի Հաճոյս, եւ ընդունել ի քէն զինդրուածս իմ: Եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

Հայր Երկնաւոր, Վստուած ճշմարիտ, որ առաքեցեր զՈրդիկ քո սիրելի ի ինդիր մոլորեալոչխարին, մեղայերկինս եւ առաջի քո: Ըսկալ զիս որպէս զանառակ որդին, եւ զգեցո ինձ զպաստմուճանն զառաջին զոր մերկացայ մեղօք: Եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

Որդի Վստուծոյ, Վստուած ճշմարիտ, որ խոնարհեցար ի Հայրական ծոցոյ, եւ առեր մարմին ի Սրբոյ Կուսէն Մարիամայ վասն մերոյ փրկութեան, խաչեցար եւ թաղեցար եւ յարեար ի մեռելոց, եւ Համբարձար փառօք առ Հայր, մեղայերկինս եւ առաջի քո: Յիշեա զիս որպէս զաւազակն՝ յորժամ դաս արքայութեամբ քով: Եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

Հոգի Վստուծոյ, Վստուած ճշմարիտ, որ իջեր ի Յորդանան եւ ի վերնաստունն, եւ լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ աւազանին, մեղայ յերկինս եւ առաջի քո, մաքրեա զիս վերստին աստուածային Հրով քով որպէս Հրեղէս լեզուք սուրբ զառաքեալն: Եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:





1

ՀԱՆԴԻՊՈՒՄ-ԶՐՈՅՑ

Երգահան Արեգ Լուսինեանի հետ

Զորեքչաբթի, 25 Հոկտեմբեր 2017-ի երեկոյեան ժամը 7.30-ին

Ա. Յակոբ Առաջ. Մայր Եկեղեցւոյ մէջ

Արեգ Լուսինեան կը խօսի մանկապատանեկան երաժշտութեան մասին առհասարակ եւ Մանկապատանեկան Պատարագին յօրինման մասին։ Ապա՝ Տիկ. Էլիզապէք Պտղունի-Հարպոյեան «Նոր Ծաղիկ»ի պատրաստութեան աշխատանին վրայ։ Խակ Արժ. Գառնիկ Աւ. Քինյ. Գոյունեան կը խօսի Պատարագին խօսքերուն մշակման շուրջ։

2

ԿՐԿՆՈՒԹԻՒՆ

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՊԱՏԱՐԱԳԻՆ

Երգահան՝ Արեգ Լուսինեան

Երգչախումբ՝ «ՆՈՐ ԾԱՂԻԿ»

Խմբավար՝ Էլիզապէք Պտղունի-Հարպոյեան

Երգեհոնահար՝ Դալար Հարպոյեան-Գալլօղեան

Կիրակի, 29 Հոկտեմբեր 2017-ի երեկոյեան ժամը 6.00-ին

Ա. Յակոբ Առաջ. Մայր Եկեղեցւոյ մէջ

ՄՈՒՏՔԲԱ ԱԶԱՏ